# ԱԼԻՔ

Ազգային, հասարակական, քաղաքական, մշակութային օրաթերթ

92-ՐԴ ՏԱՐԻ, ԹԻՒ 4 (24557), հատավաճառ՝ 20000 ռիալ

سال نودودوم - شماره (۲۴۵۵۷) ٤ - تکشماره ۲۰۰۰۰ ریال - ۸ صفحه

ԿԻՐԱԿԻ

7 ՅՈՒՆՈՒԱՐԻ 2024

یکشنبه – ۱۷ دی ۱۴۰۲

آلیک

روزنامه سیاسی، اجتماعی، فرهنگی

E-mail: info@alikonline.ir www.alikonline.ir


# ԻՐԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԻ ՎԻՇՏԸ՝ ՆԱԵՒ ՄԵՐ ՎԻՇՏՆ Է

## ՀՅԴ ԲԻՒՐՈՅԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆԸ

ՀՅԴ Բիւրօն այսու իր խորին ցաւակցութիւնն է յայտնում՝ Իրանի հոգեւոր առաջնորդ այաթօլլահ Խամենէիին, ԻԻՀ նախագահ Էբրահիմ Ռէյիսիին եւ Իրանի պայքարունակ ժողովուրդին՝ Քերման քաղաքում ահաբեկչութեան հետեւանքով զոհուած 84 իրանցիների մահուան կապակցութեամբ:

Հայ ժողովուրդը լինելով ահաբեկչութեան զոհ՝ խորապէս գիտակցում է ահաբեկչութիւն երեւոյթի քստմնելի էութիւնը:

Խստօրէն դատապարտում ենք ցանկացած տեսակի բռնութիւն եւ ահաբեկչութիւն՝ լինեն դրանք անհատական, թէ պետական մակարդակի վրայ:

Հայ եւ իրանցի ժողովուրդների բարեկամութիւնը հազարամեակների անցեալ ունի եւ վստահեցնում ենք՝ ձեր վիշտը՝ նաեւ մեր վիշտն է:

Վիրաւորներին ցանկանում ենք շուտափոյթ ապաքինում, իսկ նահատակների ընտանիքներին՝ համբերութիւն:

**ՀՅԴ Բիւրօ**

**05 յունուարի, 2024 թ.**

# Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը ցաւակցագիր է յղել Իրանի նախագահին



«ԱԼԻՔ» - Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց կաթողիկոսը վշտակցութեան ուղերձ է յղել Իրանի Իսլամական Հանրապետութեան նախագահ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէյիսիին, օրերս Քերմանում իրականացուած ահաբեկչական պայթիւնի կապակցութեամբ:

Վեհափառ Հայրապետի ուղերձում նշուած է. «Իրանի Իսլամական Հանրապետութեան մեծարգոյ նախագահ՝ այաթ. Սէյէդ Էբրահիմ Ռէյիսի

Խոր վշտով տեղեկացանք այն պայթիւնների մասին, որոնք պատահել են Քերման քաղաքում, որի հետեւանքով զոհուել ու վիրաւորուել են հարիւրաւորներ:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի եւ միաբանութեան կողմից այս աղէտի կապակցութեամբ վշտակցութիւն ենք յայտնում Իրանի բարեկամ ժողովրդին եւ զոհուածների հարազատներին»:

Ցաւակցագրի մէջ նշուած է. «Ի սրտէ աղօթում ենք, որ Բարձրեալն Աստուած խաղաղութեան ու անդորրութեան մէջ պահի Իրանի Իսլամական Հանրապետութիւնը, եւ այս մեծ աղէտի զոհուածների հարազատներին պարգեւի համբերութիւն, իսկ վիրաւորներին շուտափոյթ ապաքինում»:

# Արսէն Համբարձումեանը եւ Իշխան Սաղաթէլեանն այցելել են Հայաստանում Իրանի դեսպանութիւն





«ԱԼԻՔ» - ՀՅԴ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեանը եւ ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ Իշխան Սաղաթէլեանը յունուարի 5-ին այցելել են Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանութիւն եւ գրառում են կատարել Քերման քաղաքում տեղի ունեցած ահաբեկչութեան առիթով դեսպանատանը բացուած սգոյ մատեանում:

Այս մասին «Ֆէյսբուք»-ի իր էջում գրառում է կատարել Իշխան Սաղաթէլեանը:

«Այսօր (յունուարի 5) ՀՅԴ Բիւրոյի անդամ Արսէն Համբարձումեանի հետ այցելել ենք Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանութիւն:

Գրառում կատարելով դեսպանատանը բացուած սգոյ մատեանում՝ ՀՅԴ Բիւրոյի եւ Հայաստանի Գերագոյն մարմնի անունից մեր խորին ցաւակցութիւնն ենք յայտնել եղբայրական Իրանի ժողովրդին Քերման քաղաքում տեղի ունեցած ահաբեկչութեան կապակցութեամբ:

Ապաքինում մաղթելով բոլոր վիրաւորներին՝ մեր ցաւակցական խօսքերն ենք փոխանցել նաեւ Հայաստանի Հանրապետութիւնում Իրանի Իսլամական Հանրապետութեան արտակարգ եւ լիազօր դեսպան պարոն Մեհդի Սոբհանիին»,- գրել է Իշխան Սաղաթէլեանը:

# ԻՅՊԿ-ի ռազմածովային ուժերին միացան մէկ ռազմանաւ եւ ռազմավարական նշանակութեան իրթիռ արձակող լողացող կայանքներ

(Շար. 8-րդ էջում)





Քերմանի պայթիւնի հետքերով.

## Ձերբակալուել է 32 կասկածեալ

Քերմանի գլխաւոր դատախազ.

# «Մինչեւ տարելիցի արարողութիւն շուրջ 16 ռումբ էր յայտնաբերուել եւ չէզոքացուել. ձերբակալուածներից 23-ի ԴԱԷՇ-ի հետ կապը հաստատուել է»

«ԱԼԻՔ» - Անդրադառնալով Քերմանում տեղի ունեցած ահաբեկչութեան վերջին մանրամասներին՝ Քերմանի գլխաւոր դատախազն յայտնել է, որ 24 ժամուայ ընթացքում այս ահաբեկչութեան մէջ ներգրաւուած բոլոր գործակալները յայտնաբերուել եւ ձերբակալուել են:

«Թասնիմ»-ի համաձայն՝ Քերմանի գլխաւոր դատախազ Մեհդի Բախշին մեծ թւով ուխտաւորների

(Շար. 8-րդ էջում)





*«Թող արծիւ եւ առիւծներ շատ լինեն մեր մէջ,*
*թէ չէ աղէս ու նապաստակ ծնող ազգերի ապագան,*
*ապագայ չի էս դաժան դարում»*

***Յովհաննէս Թումանեան (1869-1923),***
***հայ մեծանուն բանաստեղծ եւ արձակագիր, ամենայն հայոց բանաստեղծ***


ARAM®
coffee
ԱՐԱՄ
قهوه آرام սուրճ
فروشگاه مرکزی:
قائم مقام فراهانی–شماره ۶۴
88303478 եւ 88308730
www.aramcoffee.com
instagram:aram__coffee

# Ադրբեջանի հետ պայմանագրի տեքստում Հայաստանի 29 800 քառ. կմ. տարածքի մասին որեւէ կէտ չկայ

Քերմանում տեղի ունեցած ահաբեկչութեան կապակցութեամբ Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետութեան դեսպանութիւնում յունուարի 5-ին բացւեց սգոյ մատեան: Հարեւան եւ բարեկամ Իրանի ժողովրդին ցաւակցելու էին եկել նաեւ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորները: Սգոյ մատեանում գրառում արեց ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչ, «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Իշխան Սաղաթէլեանը:

«Իրանը մեր բարեկամ երկիրն է եւ դատապարտելի է ցանկացած ահաբեկչութիւն. յոյս ունենք, որ մեր բարեկամ Իրանը պատւով կը յաղթահարի այս դժւարութիւնը»,-լրագրողների հետ զրոյցում ասաց Իշխան Սաղաթէլեանը:

Անդրադառնալով Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցող «խաղաղութեան պայմանագիր» փաստաթղթին՝ Իշխան Սաղաթէլեանն ասաց, որ փաստաթուղթը Բաքւի սպառնալիքի տակ է պատրաստւած՝ այն, ըստ էութեան, նոր յարձակումներ է նախապատրաստում Հայաստանի նկատմամբ:

«Խնդրում եմ այդ փաստաթուղթը չանւանել «խաղաղութեան», քանի որ խաղաղութեան հետ այն որեւէ առնչութիւն չունի: Դա Ադրբեջանի պայմաններով, Ադրբեջանի ուժի սպառնալիքի տակ ինչ-որ փաստաթղթի նախագիծ է: Դրանից Հայաստանը որեւէ բան ձեռք չի բերում, մեզ համար դրական կէտ չկայ: Ընդամէնն Ադրբեջանը մինչ այս ագրեսիայի հետեւանքով ձեռք բերածն ամրագրում է եւ, ըստ էութեան, պատրաստում է նոր յարձակումներ Հայաստանի նկատմամբ: Մենք ծանօթ ենք այդ փաստաթղթին, այն Հայաստանի համար նոր կապիտուլիացիայի փաստաթուղթ է»,- նշել է Սաղաթէլեանը:



Ըստ նրա՝ պայմանագիրը ստորագրելու պահին ադրբեջանական զօրքերը շարունակելու են մնալ ՀՀ տարածքում, սահմանազատում եւ սահմանագծում տեղի չի ունենալու, դա արւելու է ապագայում, Արցախի ռազմաքաղաքական ղեկավարութիւնն էլ կը շարունակի մնալ Բաքւի բանտում:

«Հիմա դա խաղաղութեան մասի՞ն է, թէ ոչ: Այդ փաստաթղթով Հայաստանին ոչ մի դրական բան չի տրւելու»,- շեշտել է Սաղաթէլեանը՝ պնդելով՝ քանի դեռ գործող իշխանութիւնները կան, որեւէ լաւ բան սպասել պէտք չէ:

«Սրանք պարզապէս ի վիճակի չեն եւ չեն էլ ուզում, թուրք-ադրբեջանական տանդեմի խամաճիկ կառավարութիւն են եւ վաղուց հեռացել են Հայաստանի տարածքային ամբողջականութիւնն ու ինքնիշխանութիւնը պաշտպանելու մտքից: Սրանք քաղաքական մի գիծ ունեն՝ տանք՝ ինչը հնարաւոր է՝ փոխարէնը ոչինչ չստանալով»,- ասել է ՀՅԴ Հայաստանի ԳՄ ներկայացուցիչը՝ նկատելով՝ բոլոր այն պնդումները, թէ Արցախը տանք՝ Հայաստանը կը փրկւի, սխալ են, պայմանագրի նախագծով, ըստ նրա, յստակ է՝ Հայաստանը չի փրկւում դրանով:

Նրա խօսքով՝ պայմանագրի նախագծում որեւէ բառ չկայ Ադրբեջանի կողմից Հայաստանի՝ 29.800 քառակուսի կիլոմետր տարածքը ճանաչելու մասին:

«Յստակ է նաեւ Հաջիեւի վերջին յայտարարութիւնից, որ Ադրբեջանը կրկին վերադարձել է միջանցքային խօսակցութեանը, եւ այստեղ շատ կարեւոր ենք համարում Իրանի շատ յստակ ու սկզբունքային կեցւածքը, որն արտայայտել են: Հաւատացած ենք, որ այդ յայտարարութիւնների տակ կայ նաեւ յստակ աշխատանք, եւ Իրանը, իրականում, որպէս բարեկամ եւ դաշնակից երկիր, շահագրգռւած է Հայաստանի տարածքային ամբողջականութեան պահպանմամբ»,- նշել է Սաղաթէլեանը:

**Arfd.am**

# ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորների համատեղ յայտարարութիւնը



Հայաստանի Արտաքին գործերի նախարարութիւնում ծանօթացանք Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ բանակցութիւններում շրջանառութեան մէջ դրւած փաստաթղթի նախագծի շուրջ վերջերս Երեւանին յղւած ադրբեջանական առաջարկներին:

Չմանրամասնելով փաստաթղթի առանձին դրոյթները՝ արձանագրում ենք, որ ադրբեջանական առաջարկներն ու մօտեցումները որեւէ կերպ չեն արտայայտում իրական, արդար եւ յարատեւ խաղաղութիւն հաստատելու ցանկութիւն ունեցող երկրի դիրքորոշումը:

Վերահաստատում ենք, որ շարունակում են ուժի մէջ մնալ նախկինում մեր կողմից բարձրաձայնւած բոլոր մտահոգութիւններն ու անհանգստութիւնները, որոնք որեւէ կերպ ոչ միայն չեն փարատւում, այլեւ առաւել խորանում են:

**ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւորներ՝**
**Գեղամ Մանուկեան**
**Աննա Գրիգորեան**
**Քրիստինէ Վարդանեան**
**Արթուր Խաչատրեան**
**Arfd.am**

Քրիստինէ Վարդանեան.

# «ՔՊ-ական ինքնիշխանութեան ժամանակներում Իսրայէլն ու Ադրբեջանը պէտք է որոշեն՝ մեզ ում կարելի է հերոսացնել, ում՝ ոչ»

Իսրայէլում յարձակւում են հայերի վրայ, փորձում խլել պատմական հայկական տարածքները: ՀՀ ԱԳՆ-ն յամառօրէն լռում է: Այս մասին գրում է ՀՅԴ Հայաստանի ԳՄ Հանրային կապերի գարսենեակի պատասխանատու, ՀՀ ԱԺ «Հայաստան» խմբակցութեան պատգամաւոր Քրիստինէ Վարդանեանը:

«ՀՀ-ում մի քանի անձ հաւաքւում է Նժդեհի արձանի մօտ, անում եւ ասում խելքին փչածը. այս ամէնը որեւէ հանրային աջակցութիւն չի ունենում: Սակայն ՀՀ-ում Իսրայէլի դեսպանը «Թւիթեր»-եան գրառումով՝ ուշադրութիւն, դատապարտում է Գարեգին Նժդեհի հերոսացումը մեր երկրում եւ ՀՀ իշխանութիւններից պահանջում է «հաստատակամ դիրքորոշում ցուցաբերել»:

Այ այսպիսի քպ-ական ինքնիշխանութեան ժամանակներ, երբ Իսրայէլն ու Ադրբեջանը պէտք է որոշեն մեզ ում կարելի է հերոսացնել, ում՝ ոչ:

Հ. Հրեաներին կարելի է հերոսացնել նացիստական կուսակցութեան անդամ Օսկար Շինդլերին (արդարացիօրէն), որովհետեւ, դէ հասկանում էք, ինքը հրեաների կեանքեր է փրկել:

Մեզ՝ հայերիս, արգելւած է հերոսացնել Հայաստանի աշխարհագրական ողնաշարը հայկական պահելու մէջ հսկայական աւանդ ունեցած Նժդեհին, ով հայերի կեանքեր փրկելու համար շփումներ է ունեցել Գերմանիայի պաշտօնեաների հետ»:



# Արցախի թեմի առաջնորդի ձեռամբ Սուրբ Գայիանէ եկեղեցում ճրագալոյցի պատարագ մատուցեց, ներկայ էին Սամուէլ Շահրամանեանն ու Գարեգին Բ-ն



Արցախի թեմի առաջնորդ Վրթանէս եպիսկոպոս Աբրահամեանի ձեռամբ Էջմիածնի Սուրբ Գայիանէ եկեղեցում մատուցւեց Ճրագալոյցի պատարագ, որին մասնակցեցին Արցախի նախագահ Սամուէլ Շահրամանեանը, Ամենայն Հայոց կաթողիկոս Գարեգին երկրորդը, Արցախի օրէնսդիր ու գործադիր մարմինների տարբեր պաշտօնեաներ:

Պատարագին ներկայ էին նաեւ հարիւրաւոր քաղաքացիներ՝ հիմնական մասը արցախցիներ:

Մինչ պատարագը Սամուէլ Շահրամանեանը հրաժարւեց պատասխանել Արցախի կարգավիճակի, արցախցիների հետագայ վերադարձի հետ կապւած «Ազատութեան» հարցերին:

Պատարագին մասնակցող արցախցի պաշտօնեաները նոյնպէս խուսափեցին հարցազրոյցից: Իսկ Արցախից տեղահանւածները նշում էին, թէ այնտեղ կը վերադառնան միայն այն դէպքում, եթէ Արցախն այլեւս չլինի Ադրբեջանի վերահսկողութեան տակ:

Հարցերին չպատասխանեց նաեւ Վեհափառ Հայրապետը: Ամենայն Հայոց կաթողիկոսն անպատասխան թողեց իշխանութեան հետ լարւած յարաբերութիւնների մասին հարցերը:

Վարդան Ոսկանեան.

# «Սրանց համար իրականում կարեւոր է ոչ թէ խաղաղութիւնը, այլ Հայաստանի փաստացի անդամահատումը»




Իրանագէտ Վարդան Ոսկանեանը «Ֆէյսբուք»-եան իր էջում գրում է.

«Բաքւի բարբարոսական վարչախումբը ներքեւում կցւած «քարտէզում» նշւած տարածքն է միայն համարում Հայաստան՝ այն էլ մեծ «վերապահումներով»:

Այդ վարչախմբի որեւէ պաշտօնեայ չի խօսել նոյնիսկ 29.800 քառակուսի կիլոմետր տարածքով Հայաստանի Հանրապետութեան ճանաչման մասին:

Ուշադրութիւն դարձրէք՝ բարբարոսների ոչ մի պաշտօնեայ չի խօսել այդ մասին, ինչը ցուցիչ է, որ սրանց համար իրականում կարեւոր է ոչ թէ խաղաղութիւնը, այլ Հայաստանի փաստացի անդամահատումը եւ անկենսունակ պետութեան վերածումը»:

Արա Պօղոսեան.

# «Կը յաղթի նա, ով ամենայամառն է ու ամենապատրաստը զրկանքներ կրելու համար»



Քաղաքագէտ Արա Պօղոսեանի «Ֆէյսբուք»-եան գրառումը.

Հայաստանն հիմա անցնում է տարբեր արկածախնդիր խմբերի ստեղծած դժոխքի միջով:

Արկածախնդիրների մի մասը յանուն փողի, միւսը՝ ապազգային եւ հակապետական գաղափարական ազդեցութեան ներքոյ, մի մասն էլ այս երկուսի մէջտեղում գտնւելով:

Նրանք, ովքեր Հայաստանը «արկածախնդիրներին» չյանձնելու մասին ամենաբարձրն էին խօսում, պարզւեց (չնայած ի սկզբանէ ակնյայտ էր) որ հէնց իրենք Հայաստանը տարան արկածախնդրութեան ճանապարհով:

Արկածախնդիրների համար ատելի են կոմպետենտ, տեխնոկրատ անձերը, բայց նախապատւելի են անբանիմաց պերճախօսները: Թէպէտ Հայաստանի դէպքում իշխանութեան մէջ անգամ պերճախօսների չկարողացան գտնել ու խցկել...

Ի՞նչ անել...

Աշխատել գիշեր ու զօր, աննահանջ, անտրտունջ՝ ամէն մէկն իր գաղափարական խրամատում:

Կը յաղթի նա, ով ամենայամառն է ու ամենապատրաստը զրկանքներ կրելու համար:

Չկայ յաղթանակ, առանց զրկանքների ու ծանր գնի...

# Հաւաքական ախմախութեան պարադոքսը. Օտարուած Հայաստան

Արդեօք ազգերը կարո՞ղ են լինել հաւաքականօրէն յիմար կամ անբընական եւ զուրկ բարոյականութիւնից ու արժանապատուութիւնից:

Այս հարցի անսխալ, բացարձակ պատասխանը չկայ, քանի որ անգամ գիտութեան զարգացման ներկայիս պայմաններում, գործնականում հնարաւոր չէ չափել վերը նշւած յատկանիշերը համազգային մակարդակով:

Բայց յարաբերականութեան հարթութիւնում այդ հարցի պատասխանը կարելի է գտնել՝ որպէս հիմք ընդունելով ազգի, հասարակութեան կենսագործունէութիւնն ապահովող հաւաքական ինստիտուտների որակը:

Տւեալ դէպքում այդպիսի կառուցակարգերի դերում կարող են հանդէս գալ պետութիւնը՝ որպէս հանրային դաշինքի արտայայտութիւն, եւ իշխանութիւնը՝ որպէս պետութեան կառավարումը որոշակի անձանց, միաւորների յանձնելու կոնսենսուսի դրսեւորում:

Առաջադրւած հարցի յարաբերական պատասխանն այս հարթութիւնում փնտրելու դէպքում արդիւնքները, մեղմ ասած, չեն կարող շոյել մեր ազգային արժանապատուութիւնը:

Պետութեան կերպը, որն այսօր գոյացել է Հայաստանում, եւ իշխանութիւնը, որը կառավարում է նմանակերպ պետութիւնը, ցոյց են տալիս, որ, այո, ախմախութիւնը կամ անբանականութիւնը, ինչպէս եւ անբարոյականութիւնն ու անարժանապատուութիւնը կարող են հանդէս գալ՝ որպէս ազգերի բնութագրեր: Սա ամենեւին չի նշանակում, թէ մեր հասարակութեան մէջ չկան անյիմար ու բանական անհատներ, ո՛չ, կան եւ հաշւում են տասնեակ-հազարներով ու ամենատարբեր խաւերով:

Դա չի նշանակում նաեւ, որ մեր հանրութիւնը չունի բարոյական իմպերատիւներով ու արժանապատուութեամբ ապրող ներկայացուցիչներ, ո՛չ, ունի, եւ նրանք հաշւում են հարիւր-հազարներով:

Խնդիրը, սակայն, ոչ թէ այդպիսի որակներով անհատների, հանրային շերտերի ու խաւերի գոյութիւնն է ինքնին, այլ այն հաւաքական կառուցակարգերը, որոնք՝ ի դէմս պետութեան ու իշխանութեան, արձանագրւում են՝ որպէս հասարակութեան կենսագործունէութեան ինտեգրեալ արդիւնք:

Ահա այդ տեսանկիւնից առկայ է հսկայական ճեղք, խզում հանրութեան անհատական որակների եւ հաւաքական արդիւնքների միջեւ:

Եւ մեր հանրային, պետական, քաղաքական, սոցիոմշակութային ու արժեբանական հիմնարար խնդիրների մեծ մասը գտնւում են հէնց այդ խզման տիրոյթում: Դա նշանակում է, որ՝ կա՛մ, պայմանականօրէն ասած, հանրային առաքինութիւնների մակարդակը, այդուհանդերձ, բաւարար չէ որակեալ համահասարակական արդիւնքներ ունենալու համար, կա՛մ արդիւնաւէտ չէ այն մեխանիզմը, հանրային ու քաղաքական ինստիտուտների այն համակարգը, որով այդ ռեսուրսը վերածւում է հաւաքական արդիւնքի՝ ի դէմս պետութեան ու իշխանութեան:

Առաջին հայեացքից թւում է, թէ այս խնդրի լուծման վերը նշւած խզումը վերացնելու ճանապարհին այդ մեխանիզմի կատարելագործումն է, որը կարող է տեղի ունենալ հանրութեան՝ աւելի որակեալ ներկայացուցիչներին, խաւերին հանրային ու պետական կեանքում ընդգրկելու միջոցով: Բայց դա թւացեալ լուծում է, որովհետեւ իրականում այս գործընթացը զարգանում է փակ շրջանի սկզբունքով. հասարակութեան որակեալ հատւածն ինքնաօտարւում է անբանական ու անարժանապատիւ պետութիւնից եւ իշխանութիւնից, որովհետեւ անգամ ամենամակերեսային նոյնականացումը դրանց հետ խնդրայարոյց է արժանապատուութեան համար:



Այս օտարումն է՛լ աւելի է մեծացնում առաջին հերթին՝ իշխանութեան, բայց որպէս արդիւնք՝ նաեւ պետութեան դեգրադացման աստիճանը, իսկ պլյասերման իւրաքանչիւր յաջորդ փուլ աւելի է օտարում բանական ու արժանապատիւ խաւերին: Այս օտարումն իր հերթին՝ արտայայտւում է մի քանի դրսեւորումներով:

Ոմանք պետութիւնից օտարւում են սոսկ հոգեբանօրէն՝ սեփական

(Շար. 5-րդ էջում)

Քաղաքագէտ.

# «Հեքիաթը, թէ Սպիտակ տնից կը զանգեն ու կը փրկւենք, այդպէս էլ մնաց հեքիաթ»



Քաղաքագէտ Գարիկ Քեռեանի «Ֆէյսբուք»-եան գրառումը.

«Արեւմտեան դեմոկրատական երկրները՝ ԱՄՆ-ն, ԵՄ մէջ համախըմբւած պետութիւնները ունեն շատ աւելի զարգացած, առաջադիմական եւ արդիւնաւէտ գործող քաղաքական եւ տնտեսական համակարգեր: Սա բացարձակ ճշմարտութիւն է եւ ապացուցման կարիք չունի: Անհրաժեշտ է արդեօք զարգացնել եւ ընդլայնել յարաբերութիւններն ու համագործակցութիւնը հաւաքական Արեւմուտքի հետ, իհարկէ այո, բացառել նման յարաբերութիւնները, անգրագիտութիւն է եւ վնասակար:

Սակայն կարող է արդեօք արեւմրտեան ինտեգրացիոն ուղղութիւնն ապահովել ՀՀ գոյատեւումը տարածաշրջանային բարդ եւ կոնֆլիկտային հանգոյցում: Հարցի պատասխանը միանշանակ է. ոչ եւ կրկին անգամ ոչ: Թուրքիայի եւ Ադրբեջանի հետ բարդ եւ կոնֆլիկտային յարաբերութիւնների պայմաններում անհրաժեշտ է ոչ թէ զարգացած երկրների հետ ինտեգրացիայի պայծառ ապագայի տեսլական, այլ պատերազմական սպառնալիքը չէզոքացնող միջպետական ռազմաքաղաքական համագործակցութիւն եւ ռազմական ներկայութիւն: Ռուս-թուրք-ադրբեջանական համագործակցութիւնը սիրիական եւ ղարաբաղեան ճակատներում հիմք ընդունելով, Հայաստանի հակառուսական «քաղաքագիտական» հատւածը կոչ է անում անցնել հիւսիսային թշնամու դէմ ակտիւ գործողութիւնների: Ֆրանսիայից զէնքի գնումը թմբկահարւում է որպէս շրջադարձի սկիզբ: Այստեղ անտեսւում է այն իրողութիւնը, որ Ադրբեջանն ամբողջութեամբ իր զինւած ուժերը տանում է Թուրքիայի հետ ռազմական միաւորման:

Վերջինս ՆԱՏՕ-ի անդամ է, հաւաքական Արեւմուտքի ռազմական այլ կառոյց գոյութիւն չունի: Այդ է պատճառը, որ եւրոդիտորդները զինւած են միայն հեռադիտակներով այլ պարագայում դա կը հակասի ՆԱՏՕ-ական դաշինքային տրամաբանութեանը: Հայաստանի հետ առճակատման մէջ գտնւող Ադրբեջանի վրայ աւելի մեծ ազդեցութեան լծակներ ունի Մոսկւան: Այս իրողութիւնները վկայում են, որ պատերազմական վտանգի կանխման բանալիները աւելի շատ Մոսկւայում են, քան, թէ Բրիւսէլում կամ Վաշինգտոնում: Այն հեքիաթը, որ Սպիտակ տանից կը զանգեն եւ կը փրկւենք, այդպէս էլ մնաց հեքիաթ: Ռուսաստանը իհարկէ վատ դաշնակից է, Ղարաբաղի դէպքերը վկայ, բայց նա կարող է դառնալ ոխերիմ թշնամի, եթէ քեզ պահես Զելենսկու նման: Իրատեսական արտաքին քաղաքականութիւնը պահանջում է առաջնորդւել սառը դատողութեամբ եւ հաշւարկներով եւ ոչ թէ ժողովրդավարութիւնը դիտես անվտանգութեան երաշխիք: Յաւօք ոչ ժողովրդավար Բաքւի վարչակարգը աւելի կարեւոր գործընկեր է բոլոր բեւեռներում: Կան նաեւ նոր իրողութիւններ, որոնք ստիպում են նոր հայեացքով նայել միջազգային իրադրութեանը: Ռուսաստանը չի պարտւում Ուկրաինայում, Իրանը դարձաւ ԲՐԻՔՍ-ի անդամ, Հայաստանը ստանձնեց ԵԱՏՄ նախագահութիւնը, Ալիեւը արեւմտեան հարթակներ չի գնում, Կրեմլը յայտարարում է, որ չի հեռանում տարածաշըրջանից եւ ռազմաբազան շարունակելու է մնալ Գիւմրիում, Հայաստանը դառնում ԵԱՏՄ-ի հետ ազատ առեւտրի պայմանագիր կնքած Իրանի միակ սահմանային երկիրը եւ այլն: Մենք այլեւս սխալելու իրաւունք չունենք: Պէտք է բացառել ուկրաինացման սցենարը»:

# Ալիեւի փեսան մի ամբողջ գիւղ է տարհանում իր բիզնեսի համար



ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Կալիֆորնիա կուրիէր» թերթի հրատարակիչ
www.TheCaliforniaCourier.com

Ադրբեջանում անընդհատ սկանդալներ են տեղի ունենում Ալիեւների կլանի հետ կապւած: Նախագահ Իլհամ Ալիեւը, որը երկաթեայ բռունցքով ղեկավարում է երկիրը 2003 թւականից, իր պաշտօնը ստանձնել է հօրից՝ Հէյդար Ալիեւից, որը պետութեան ղեկավարն էր 1993-2003 թւականներին: Որպէսզի Ալիեւները մի քանի սերունդ կառավարեն Ադրբեջանը, Իլհամ Ալիեւն իր կնոջը նշանակել է փոխնախագահ: Համոզւած եմ, որ նա իր զաւակներից մէկին կը նշանակի իր իրաւայաջորդը՝ այդպիսով շարունակելով Ալիեւների դինաստիան Ադրբեջանում:

Ադրբեջանում վերջին սկանդալը բացայայտւել է Արդի Փուլաջի կողմից. առաջին անգամ հրապարակւել Abzas Media-ում, իսկ խըմբագրւած տարբերակը վերահրապարակւել է Globalvoices.org-ի կողմից: Յօդւածը վերնագրւած է. «Ադրբեջանում նախագահի փեսայի համար մի ամբողջ գիւղ են դատարկել»:

Գարաչայլի գիւղն սկզբում պատկանել է Ադրբեջանի մեծ մուֆթի Ալլահշուքիւր Փաշազադէին՝ Ադրբեջանի բարձրաստիճան մահմեդական հոգեւորականին, որը հողերը վարձակալութեան էր տւել գիւղացիներին: Այնուհետեւ 2007 թւականին, գիւղը 49 տարով վարձակալութեան է յանձնւել «Շաբրան ագրոհամալիր» ՍՊԸ-ին, որից յետոյ ընկերութիւնը գիւղացիներին հրամայել է ազատել հողատարածքները: Գիւղացիներից Թահիր Ռասուլովը դատի է տւել ընկերութեանը՝ փոխհատուցում ստանալու համար: Սակայն երկու տարի անց նա պարտւել է դատարանում: «Ինձ շատ են խոշտանգել ու տանջել: Նրանք ինձ սպառնացել են ոստիկաններով: Ինձ հանել են իմ պապենական տնից»: Ընկերութիւնը գիւղը շրջափակել է մետաղալարերով: «Այժմ մենք մեր նախնիների հողերին նայում ենք լարերի յետեւից»,- ասաց Ռասուլովը:

«Շաբրան ագրոհամալիր»-ի հիմնադիրը Բաքւի Ագրոպարկն է, որը պատկանում է գործարար Սամեդ Ղուրբանովին, որն ամուսնացած է Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի կրտսեր դստեր՝ Արզու Ալիեւայի հետ:

Ընկերութիւնում Ղուրբանովի 6.9 միլիոն դոլարի անձնական ներդրումը համադրւել է 6 միլիոն դոլար լրացուցիչ վարկի հետ՝ տրամադրւած Ձեռնարկատիրութեան զարգացման պետական հիմնադրամի կողմից 10 տարի ժամկէտով՝ 5 տոկոս տոկոսադրոյքով:

Յօդւածում ասւում է, որ «Ղուրբանովի ընկերութիւնն ազատւել է ջերմոցի կառուցման ժամանակ էլեկտրալարերի տեղադրման համար վճարելուց, որը կատարել է Իլհամ Ալիեւի աներոջը՝ Արիֆ Փաշաեւին պատկանող «Ռետրօ Հոլդինգ» ընկերութիւնը: Ներդրումային այլ առաւելութիւնները ներառել են ագրոհամալիրի ոռոգման ենթակառուցւածքի համար բարենպաստ վարկերը՝ բոլորը տրամադրւած պետութեան կողմից»:

Գարաչայլի գիւղի նախկին բնակիչ Շոհրատ Գարդաշալիեւն ասաց. «Գազատարն այստեղով անցնում է դէպի Ագրոպարկ եւ գազ չի մատակարարում մարդկանց, նրանք պարարտանիւթ են տալիս դաշտերին: Ճիշտ է նրանք միլիոններ են ծախսում պարարտանիւթերի վրայ, բայց մարդիկ այնքան արժէք չունեն, որքան պարարտանիւթերը: Մենք այստեղ չենք կարող մշակաբոյսեր աճեցնել. մենք հող չունենք, սեփականութիւն չունենք: Այս ամբողջը ժողովրդի հողն է, բայց տեսէք, ներխուժել են ու վերցրել այն… Ինձ ուղղակի ասացին՝ ընկիր եւ մեռիր, կը խեղդեմ եւ կը սպանեմ քեզ»:

Թահիր Ռասուլովն ասաց. «Այստեղ նշւած են անուններ, նշւած է նախագահի անունը, տիկին Մեհրիբան Ալիեւայի (փոխնախագահի եւ կնոջ) անունը: Հէնց որ մեր անասուններից մէկն անցնում է այդ դաշտը, մեր կառավարիչն ասում է, որ սա տիկին Մեհրիբանի տեղն է: Ուրեմն տիկին Մեհրիբանն այստեղ ներկայացուցիչ է նշանակել՝ քաղաքացուն սպանելու, ծեծելու, խոշտանգելու կամ սպառնալո՛ւ համար»:

Քանի որ գիւղացիների համար զբաղւածութեան հնարաւորութիւն չկայ, միակ հնարաւորութիւնը ագրոհամալիրում աշխատելն է, որտեղ կա՛մ հրաժարւել են նրանց աշխատանքի ընդունել, կա՛մ առաջարկել են ամսական ընդամէնը 200 դոլար աշխատավարձ: Գիւղացիներից մէկը ողբալի վիճակը նկարագրեց որպէս «ժամանակակից ստրկութիւն»:

Դատական փաստաթղթերը ցոյց են տւել, որ Բաքւի Ագրոպարկը «անհաւանական էժան վարձավճար է տւել Գարաչայլի գիւղում վարձակալւած հողերի համար՝ տարեկան 1500 դոլար վարձավճար 4300 ակր հողի համար»: Ռասուլովն ասել է, որ ինքը նախկինում «այդ հողի մէկ ակրի համար վճարում էր 45 դոլար վարձավճար: Եւ այնուամենայնիւ, Բաքւի Ագրոպարկը մէկ ակրի համար վճարում է 2.2 դոլարից պակաս»:

Սամեդ Ղուրբանովին են պատկանում նաեւ «Բաքւի Ագրոպարկ առեւտրի տունը, որը զբաղւում է մրգերի եւ բանջարեղէնի մեծածախ առեւտրով. «Մաքսիթրէյդինգ» ՍՊԸ-ն, որը զբաղւում է պարէնային ապրանքների ներմուծմամբ եւ բաշխմամբ. ինչպէս նաեւ Mirlex Group-ին պատկանող մի քանի այլ ընկերութիւններ (Mirlex Development եւ Mirlex Construction ՍՊԸ), որոնք զբաղւում են կրակմարիչների վաճառքով, աւտոմատ հակահրդեհային ազդանշանների տեղադրմամբ, կայանման եւ տեսահսկման համակարգերով: Սամեդ Ղուրբանովի բազմաթիւ ընկերութիւնների գրասենեակները գտնւում են «Պորտ Բաքու Թաուերս» էլիտար բիզնես կենտրոնում, որը պատկանում է Pasha Holding-ին [տէրը Մեհրիբան Ալիեւայի հայրն է]»:

Abzas Media-ի լրագրողները փորձել են «խօսել Շաբրանի ագրոհամալիրի կառավարիչների հետ, սակայն ապարդիւն: Նկարահանող խմբին կանգնեցրել է անվտանգութեան աշխատակիցը եւ ասել, որ կառավարիչներից ոչ մէկը համալիրում չէ»:

Յաւօք, «այն բանից յետոյ, երբ գիւղի բնակիչները ստիպւած են եղել փախչել, նրանք թողել են գիւղի գերեզմանոցը: Քանի որ համալիրը կառուցւել է, եւ նրանց հողերը խլել են, նրանք պէտք է թոյլտւութիւն խնդրեն ագրոհամալիրի ղեկավարութիւնից՝ անգամ իրենց հանգուցեալ հարազատների շիրիմներին այցելելու համար»:

Շատ ողբերգական է, որ կառավարութիւնը, որը տարեկան միլիարդաւոր դոլարներ է վաստակում իր նաւթի ու գազի հսկայական պաշարներից, չի ցանկանում այդ հարստութեան մի փոքր մասը կիսել Ադրբեջանի աղքատ գիւղացիների հետ:

**Թարգմանութիւնը՝**
**ՌՈՒԶԱՆՆԱ ԱՒԱԳԵԱՆԻ**

# 2024 թուականի Ամանորի սուրբ պատարագ՝ Թեհրանի հայոց թեմում



Դեկտեմբերի 31-ին, կէս գիշեր անց եւ յունուար 1-ի առաւօտեան, տնօրինութեամբ Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի ս. եւ անմահ պատարագ մատուցւեց Թեհրանի հայոց թեմի եկեղեցիներում:

Դեկտեմբեր 31-ի կէս գիշերին, Սուրբ Սարգիս եկեղեցում կրօնական արարողութեան պատարագիչն էր թեմակալ առաջնորդի հրաւէրով քաղաքս հիւրաբար գտնուող՝ Տ. Վիգէն վրդ. Տալգըրճեանը:

Ս. եւ անմահ պատարագի ընթացքում եկեղեցիներում ընթերցուեց թեմիս առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի Նոր տարուայ պատգամը:

Ս. պատարագին տարբեր եկեղեցիներում ներկայ էին թեմի ազգային մարմինների ներկայացուցիչները եւ հաւատացեալ ժողովուրդ:

**Ազգային առաջնորդարանի**
**Հանրային կապի գրասենեակ**

















# Սուրբ եւ անմահ պատարագ՝ 2024 թուականի Ամանորի առթիւ











2024 թուականի յունուարի 1-ի առաւօտեան, Ս. Ամենափրկիչ վանքի Ս. Յովսէփ Արիմաթացի եկեղեցում, սուրբ եւ անմահ պատարագ մատուցւեց՝ Ամանորի առթիւ: Օրուայ պատարագիչ հայրն էր Տ. Մեսրոպ աւ. քհնյ. Գալըստանեանը. երգեցողութեամբ հանդէս եկաւ Ս. Ամենափրկիչ վանքի «Կոմիտաս» երգչախումբը՝ ղեկավարութեամբ՝ Արբի Բաբումեանի:

Ընթացքում, քարոզի ժամանակ ընթերցւեց Սպահանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սիփան եպս. Քէչէճեանի Ամանորեայ պատգամը:

Ահա մի հատուածի մէջբերում այդ պատգամից.

«Նոր տարի է այսօր եւ մեզանից իւրաքանչիւրի համար ոսկի առիթ է վերանորոգւելու: Հետեւաբար, իսկական ինքնաքննութեամբ հասնենք անհրաժեշտ ախտաճանաչումների, որպէսզի իրապաշտ մօտեցումով եւ անդարձ վճռականութեամբ փորձենք իրագործել անյետաձգելի ու հրամայական ինքնասրբագրութիւնը: Զղջա՛նք ու ապաշխարե՛նք: Միշտ ընտրե՛նք լաւն ու բարին: Վերադա՛րձ կատարենք աստուածահաճոյ կեանքի ճանապարհ եւ անձանձիր կերպով մեր ժամանակը լցնենք բարեգործութեամբ: Անձանձրոյթ տքնաջանութեամբ նուիրւենք աղօթքի, մեր մէջ յարուցանելով հաւատը, յոյսը, սէրը, եղբայրութիւնը, հանդուրժողութիւնն ու միասնութիւնը, որպէսզի ոչ միայն արժանանանք Աստծու ներողամտութեանը, ողորմութեանն ու գթութեանը, այլեւ ստանանք մեր երկնաւոր Հօր օրհնութիւններն ու շնորհները՝ կերտելու համար լուսաւոր ապագայով երաշխաւորւած բարգաւաճ Հայրենիք»:

Աւարտին պատարագիչ Հայրը Ամանորի առթիւ շնորհաւորանքի խօսք փոխանցեց՝ ազգային մարմինների անդամներին եւ թեմի զաւակներին՝ մաղթելով սէր, առողջութիւն, երջանկութիւն եւ յաջողութիւն, իսկ հայրենիքին՝ յաղթանակներ եւ նորանոր նւաճումներ:

**Թղթակից (Նոր Ջուղա)**

# 89 տարեկանում վախճանուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Արիս Ս. արքեպիսկոպոս Շիրւանեանը



*Կեանքի 89-րդ տարում վախճանուել է Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի երիցագոյն միաբաններից Գերաշնորհ Տ. Արիս Ս. արքեպիսկոպոս Շիրւանեանը:*

*Մայր Աթոռի տեղեկատուական համակարգից յայտնում են News.am-ին, որ յունուարի 7-ին՝ ժամը 18:00-ին, Սուրբ Գայիանէ վանքում կը կատարուի հանգուցեալ Սրբազան Հօր եկեղեցու կարգը: Յունուարի 8-ին, ժամը 10:00-ին, յընթացս սուրբ պատարագի կը կատարուի Արիս արքեպիսկոպոսի վերջին օծման արարողութիւնը, ապա յուղարկաւորութիւնը Մայր Աթոռի միաբանական գերեզմանատանը:*

*Գերաշնորհ Տ. Արիս Ս. արքեպիսկոպոս Շիրւանեանը (աւազանի անունով՝ Արմենակ) ծնուել է 1934 թ. յուլիսի 23-ին Հայֆայում (Պաղեստին, այժմեան Իսրայէլի տարածք): Նախնական կրթութիւնը ստացել է Հայֆայի Սուրբ Եղիա նախակրթական դպրոցում, ապա Լիբանանի Բուրջ Համուդի Սրբոց Քառասուն Մանկանց վարժարանում:*

*1952-1957 թթ. ուսանել է Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան Սրբոց Ժառանգաւորաց վարժարանում, որն աւարտելուց յետոյ ձեռնադրուել է կուսակրօն քահանայ՝ անդամագրուելով Երուսաղէմի Սրբոց Յակոբեանց միաբանութեանը:*

*1964 թ. ուսանել է Դարէմի (Անգլիա) համալսարանի աստուածաբանութեան ֆակուլտետում՝ ստանալով աստուածաբանութեան բակալաւրի աստիճան:*

*1964 - 1966 թթ. ուսանել է Փարիզի կաթոլիկ համալսարանում:*

***Եկեղեցական կոչումներ եւ ձեռնադրութիւններ***

*1954 թ. - սարկաւագ՝ ձեռամբ Տ. Եղիշէ արքեպիսկոպոս Տէրտէրեանի:*

*1957 թ. - կուսակրօն քահանայ՝ ձեռամբ Տիրան արքեպիսկոպոս Ներսոյեանի:*

*1964 թ. - մասնաւոր վարդապետութեան 4 աստիճաններ՝ ձեռամբ Տ. Ասողիկ եպիսկոպոս Ղազարեանի:*

*1972 թ. - ծայրագոյն վարդապետութեան աստիճան՝ ձեռամբ Տ. Վաչէ արքեպիսկոպոս Յովսեփեանի:*

*1974 թ. – եպիսկոպոս՝ ձեռամբ Վազգէն Ա Ամենայն Հայոց կաթողիկոսի:*

*2006 թ. - արքութեան պատիւ՝ Ն.Ս.Օ.Ս.Տ. Գարեգին Երկրորդ Ամենայն Հայոց կաթողիկոսի Հայրապետական կոնդակով:*

***Պաշտօնավարութիւն***

*1957 թ. - Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի փոխտեսուչ եւ դասախօս:*

*1958 թ. - հոգեւոր հովիւ Օմանի (Յորդանան) Ս. Թադէոս հայկական եկեղեցու: Տնօրէն «Հեթումեան» հայկական դպրոցի:*

*1966 թ. - Լոս Անջելէսի (ԱՄՆ) Ս. Յակոբ հայկական եկեղեցու հոգեւոր հովիւ:*

*1972 – 1974 թթ. – դասախօս, փոխտեսուչ, ապա տեսուչ Ս. Էջմիածնի «Գէորգեան» հոգեւոր ճեմարանի:*

*1975 – 1979 թթ. - Կանադայի հայոց թեմի առաջնորդական փոխանորդ:*

*1979 – 1980 թթ. - Կալկաթայի հայկական ճեմարանի տեսուչ:*

*1998 - 1999 թթ. - Երուսաղէմի Ժառանգաւորաց վարժարանի տեսուչ:*

*2012 թ. - Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան պատրիարքական տեղապահ:*

*2013 թ. - Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան էկումենիկ եւ արտաքին յարաբերութիւնների բաժնի տնօրէն եւ մամլոյ խօսնակ:*

## Հոգեբան Արկադի Մեհրաբեան.

# «2023 թ.-ը պատերազմից յետոյ ժողովրդի մօտ առաջացած ապատիան չբեկեց»




***2023 թւականը յագեցած էր իրադարձութիւններով՝ թէ՛ Արցախեան հիմնահարցի ոլորտում, թէ՛ ներքին հասարակական-քաղաքական կեանքում: Ինչ ազդեցութիւն է թողնում անցնող տարին հայ ժողովրդի հոգեբանութեան եւ հասարակութեան հաւաքական գործելակերպի վրայ: Panorama.am-ը հոգեթերապեւտ, հոգեբան «Ժեստ» հոգեբանական կենտրոնի համահիմնադիր Արկադի Մեհրաբեանին խնդրեց ամփոփել անցնող տարին:***

*Ա. Մեհրաբեան-Անցնող տարում մենք ականատես եղանք Արցախի ժողովրդի նկատմամբ հերթական ագրեսիային եւ հայաթափմանը, ինչը, բնականաբար, բացասաբար ազդեց հայ ժողովրդի հոգեբանութեան վրայ: Ապատիա, հիասթափութիւն, անտարբերութիւն, դրանք աւելի են խորանում, աւելի լայն մասսաներ ընդգրկելով: 30 տարւայ կտրուածքով, եթէ մարդիկ ակտիւութիւն էին ցուցաբերում, փորձում էին ինչ-որ բան փոխել այս երկրում, դրական առաջընթացներ ապահովել եւ տոկոսային յարաբերութեամբ, եթէ նախկինում նրանք 70% էին կազմում, ապա հիմա 3-4% են, ոչ աւել, բոլորը՝ բացի ակտիւ քաղաքականութիւնով զբաղւողների, որոնք, միգուցէ, իրենք էլ կեղծ են, ցոյց են տալիս, թէ իբր ուզում են ինչ-որ բան փոխել, ես դրա վրայ էլ եմ կասկածում, մնացած ժողովրդի շրջանում 95-97%-ը ոչ մի առնչութիւն չի ուզում ունենալ: Այդ պատճառով ունենք այս վիճակը:*

***Panorama.am- Տարեվերջին հայ 32 ռազմագերիների ազատ արձակումը եւ հայ-ադրբեջանական համատեղ յայտարարութիւնը, ինչ-որ բան կը փոխի՞ հասարակութեան կեանքում:***

*Ա. Մեհրաբեան-Տարւայ վերջում գերիների ազատ արձակումը եւ այդ յայտարարութիւնը, թեթեւ դրւագային կարող է մի փոքր ազդի, ուրիշ ոչ մի բան: Առաւել եւս այդ յայտարարութիւնը ոչինչ չի տալու, մարդիկ այնքան են յոգնել նման յայտարարութիւնները լսելուց: Համեմատութիւնը միգուցէ շատ կոպիտ լինի, բայց այսպէս ասեմ, որ ցայտուն լինի: Ենթադրենք մենք կորցնում ենք հինգ հազար դոլար՝ անիմաստ, կորցնում ենք տունը, քանի որ բանկը վերցրել է մեր ձեռքից, որը ուրիշի համար էինք գրաւ դրել, այդքան էլ մեղաւորութիւն չունէինք, լաւութիւն էինք արել եւ դրա համար պատժեցինք ու բազմաթիւ փորձանքներ է գալիս մեր գլխին եւ դրա փոխարէն հարեւանը 32 դոլար պարտք է լինում եւ վերադարձնում է: Այն ինչքանո՞վ ուրախութիւն կը պատճառի, միգուցէ մի յոյսի նշոյլ ազդեցութիւն ունենայ, չեմ կարծում, որ այն խոշոր դրական տեղաշարժ կունենայ հոգեվիճակի վրայ՝ որպէս ազդեցութիւն:*

*Գերիների ընտանիքների, հարազատների, ապրումակցող անձանց մօտ կառաջանան դրական էմոցիաներ, բայց միեւնոյնն է, այն դրւագային է, եթէ դուք հարցնում էք, թէ այն ինչ ֆունդամենտալ ազդեցութիւն կունենայ, ապա՝ ֆունդամենտալ ոչ մի փոփոխութիւն մեր ժողովրդի հոգեվիճակի վրայ չի ունենալու: Գործնականում այն ի՞նչ է փոխում մեր կամ հայրենիքի կեանքում, Արցախից բռնագաղթածների կեանքում, կամ պատերազմում զոհուածների հարազատների կեանքում՝ գրեթէ ոչինչ, զուտ դրւագային լաւ բան: Ասենք ամբողջ տարին մարդիկ բացասական էմոցիաներով ապրեն եւ մի հատիկ, մի օր տօնին ուրախանան, էս ա փոխելու ընդամէնը:*

***Panorama.am- Որոշ փորձագէտներ վերջին համատեղ յայտարարութեան մէջ տեսան դրական տեղաշարժ հայ-ադրբեջանական յարաբերութիւնների կարգաւորման հարցում, եթէ այդպէս լինի, այն ինչպէ՞ս կազդի ժողովրդի հոգեբանութեան վրայ, այս համատարած ապատիան կը թուլանա՞յ, որն ցցուն արտայայտուեց Երեւանի քաղաքապետի ընտրութիւնների ժամանակ:***

*Ա. Մեհրաբեան- Վերջին ընտրութիւնները ցոյց տուեցին, որ ո՛չ իշխանութիւնը, ո՛չ ընդդիմութիւնը, եւ ո՛չ մէկը չունի ժողովրդի աջակցութիւնը, քանի որ տեսլական էլ չկայ: Ժողովրդին ինչ տեսլական ներկայացրել են՝ խաբել են: Ընդդիմութիւնը նախկինում է խաբել, հիմա էլ ոչինչ չի կարողանում անել, ուրիշ նոր ուժեր էլ չկան, որոնք հաւատք կը ներշնչեն: Գործուն լուրջ փոփոխութիւններ մինչեւ չլինի, չեմ կարծում, թէ բան փոխի: Գնալ ընտրութեան, թէ չգնալ, ժողովուրդն էլ կարող է ընդհանրապէս չմասնակցեն:*

*Երեւանի ընտրութիւններին եթէ ինչ-որ մի տոկոս մասնակցեց, առաջիկայ ընտրութիւններին հնարաւոր է աւելի քիչ մասնակցեն: Ինչը լուրջ մտահոգութիւնների տեղիք կը տայ ոչ միայն մեր շրջանում, այլ ամբողջ աշխարհում: Դրսից կը նայեն, կասեն՝*

**(Շար. 6-րդ էջում)**

# ՏԱՐԻՆ ՓԱԿԻԵՑ ԼԱՑՈՎ ՈՒ ՈՂԲՈՎ



*Գազայում թափւող եւ տարիք ու սեռ չճանաչող առօրեայ արիւնը, կրօնական այլազանութիւնն էլ է մոռացել: Քրիստոնեայ եւ մուսուլման կրօնների հետեւորդներ, որոնք պաղեստինեան Գազայի տարածքում դարերով Աստծուն են կանչել, հիմա միայն Աստծուն ունեն իրենց պահպանելու խոստում տւող: Աշխարհի մարդկութեան խիղճը սառել է, որի հետեւանքով լեզուն կապ է եկել, աչքերը կուրացել եւ ականջները խլացել: Հոտառութի՞ւն էլ է գործից ընկել, մտածում է մարդ, որով կարող է վառօդի ու ծծմբի հոտը քաշելով զգաստանալ, ու մարդկային կեանքեր փրկելու առաքելութիւն կատարել:*

*Կանայք, նորածիններ, երեխաներ, պատանիներ եւ կեանքին նոր բացւող երիտասարդութիւն պաղեստինեան հողամասերում, ամէն օր ենթարկւում են սիոնիստական կառավարութեան անմարդկային կոտորածին:*

*Այո՛, սխալւե՛ց աշխարհը, Հայոց Ցեղասպանութիւնը անպատիժ թողնելով, որովհետեւ ցանկացած անպատիժ մնացած գործ, անպայման կրկնւելու է պատմութեան ընթացքում:*

*Այո՛, սխալւե՛ց աշխարհը, երբ հայի արդարութիւն կանչող աղաղակների առջեւ մինչեւ այսօր փակել է իր ականջները եւ աշխարհաքաղաքական ինչ-ինչ հաշիւներով անպատիժ թողնում ցեղասպանին:*

*Այո՛, սխալւեց աշխարհը, որովհետեւ յանցագործին անպատիժ թողնելով, նոր յանցագործութիւնների պատճառ է հանդիսանում, նոր յանցագործներին անուղակիօրէն հրաւիրելով հրապարակ:*

*Այո՛, սխալւեց աշխարհը, որն հակառակ ինքն իրեն քաղաքակիրթ ու զարգացած դարի սերունդ համարելու յաւակնութեան, ինքնահաստատման համար զէնքի արտադրութիւնից բացի, աւելի շահաբեր գործ չի՛ կարողանում ստեղծել այս մոլորակում:*

*Տարին փակւեց, սակայն մարդկային արեան հոսքը չդադարեց: Գերպետութիւն լինելու ամբարտաւան մօտեցումը որոշ երկրների պարագայում, անիմաստ եւ անտեղի հպարտութիւն է սրանից յետոյ, առանց մարդկային իրաւունքների եւ արդարութեան: Կենդանիների եւ բնութեան հանդէպ արտայայտւող գութն ու խիղճը անիմաստ թատրոնի պատկերացում են միայն, երբ մարդկային սպանդի նկատմամբ անխիղճ ու անգութ մօտեցումը այնքան բնական է դարձել, նոյնիսկ ինք իրեն քաղաքակիրթ համարող աշխարհում…:*

*Այո՛, նոյն քաղաքակիրթ աշխարհը չէ՞ր, որ աւելի քան երեսուն տարիներ անտեսեց մի ժողովրդի ինքնորոշման իրաւունքը, եւ նրա պապենական հողամասի սեփական ուժերով զարգացման ճիգը մի օրում մոռացաւ…:*

*Քաղաքակիրթ նոյն աշխարհը չէ՞ր, որ հեռուստացոյցից հետաքրքիր մի տեսաժապաւէն դիտելու հանգոյն, փոքր պաստառի վրայ նայեց շուրջ 120 հազար հայերի տեղահանութեան եւ բռնագաղթին: Այո՛, նոյն աշխարհն էր, որովհետեւ նա արդէն աւելի քան 100 տարւայ փորձ ունէր եւ մասնագէտ էր դարձել ցեղասպանութիւնների, բռնագաղթերի եւ աքսորի դէպքում լուռ մնալու գործում:*

*Աշխարհի վերոյիշեալ փորձառութիւնների հետեւանք է այն, որը տեսնում ենք այսօր Գազայում, երբ կին ու երեխայ կոտորւում են անխնայ: Կաթնակեր մանուկը իր մօր կրծքի վրայ է մահանում, իսկ ողջ մնացածը արդէն ծնող չունի եւ մնացել է օտար մարդկանց խղճի ձեռքը…:*

*Ո՞վ է պատասխանատու այս ամէնի համար…: Արդարութի՞ւն ենք փնտրում այս անարդար ու անիրաւ աշխարհում, երբ միայն ու միայն սեփական շահի ու խղճի անտարբերութեան վկաներն ենք հանդիսանում ամէն րոպէ…:*

*Տարին փակեցինք լացով ու ողբով: Սակայն մեր յոյսը դրած Աստծու ամենազօր ուժի վրայ, լուսազգեստ ու պայծառ ենք տեսնում գալիքը՝ ապագան, որը նոր՝ 2024 տարեթւով է բացւելու մեզ համար:*

**Ատրպատականի հայոց թեմի հրատարակչութիւն**

**«Արտազ» ամսագիր (թիւ 12, դեկտեմբեր 2023 թ.)**

## Հաւաքական...

(Շար. 3-րդ էջից)

*երկրում ապրելով արտագաղթածի զգացողութեամբ, որոշներն օտարումն իրականացնում են նաեւ ֆիզիկապէս՝ արտագաղթելով, այս խմբերում կան նաեւ արտագաղթելու հնարաւորութիւն ունեցողներ, բայց դեռ դիմադրողներ, եւ հակառակը՝ երկրից հեռանալու վերջնական որոշում կայացրածներ, որոնք չունեն դրա հնարաւորութիւնը:*

*Այս՝ հիմնականում լատենտ գործընթացների հետեւանքն այն է, որ պետութիւնը մնում է բանականութեան ու արժանապատւութեան հետ անյաղթահարելի խնդիրներ ունեցողներին, որոնք այդ խնդիրը փորձում են լուծել բանականութեանն ու արժանապատւութեանը վերջնականապէս յաղթելով:*

*Եւ նրանք յաջողելու են այնքան ժամանակ, քանի դեռ հասարակութեան՝ պետութիւնից օտարւած շերտերը չեն գտել պետութիւնը յիմարութիւնից ու անարժանապատւութիւնից օտարելու միջոցները:*

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ԱՒԵՏԻՍԵԱՆ**

**168.am**

# Ամանորեայ 15 անսովոր աւանդոյթները աշխարհում



***Իւրաքանչիւր ոք ունի Ամանորը դիմաւորելու իր աւանդոյթները: Ոմանք նախընտրում են հանգիստ երեկոն, որն անցկացնում են ընկերների հետ կամ՝ տնական ամանորեայ ընթրիքը, կամ էլ՝ կարաոկեներից մէկում զւարճանալը: Իրականում ցանկացած ընտրութիւն լաւ է, եթէ այն վայելում էք:***

***Մեծ նշանակութիւն ունի նաեւ այն, թէ դուք որտեղ էք ապրում, քանի որ տարբեր երկրներում տարբեր աւանդոյթներ կան:***

***Օրինակ, խորհրդանշական գոյներ կրելուց մինչեւ դռան վրայ աղ ցօղելը կարող է խրախուսել գալիք տարւայ յաջողութիւնը, առատութիւնը եւ ֆինանսական յաջողութիւնը: Ստորեւ ներկայացնում ենք 15 աւանդոյթներ, որոնք աշխարհի տարբեր երկրներում համարւում են յաջողութեան գրաւականներ.***



**Խաղող՝ յաջողութեան համար**

*Իսպանիայում մարդիկ կէսգիշերին 12 հատիկ խաղող են ուտում: Այս աւանդոյթը սկիզբ է առել դեռեւս 19-րդ դարի վերջին: Այս սովորոյթի հեղինակները խաղողագործներն են եղել, որոնք այս կերպ փորձում էին տարեվերջին աւելի շատ խաղող վաճառել: Իսպանացիները իւրաքանչիւր զանգի հետ մէկ խաղող են ուտում, ինչը, ինչպէս ենթադրւում է, բերում է բարեկեցութեան:*



**Դատարկ ճամբրուկ**

*Եթէ ցանկանում ենք տարւայ ընթացքում շատ ճանապարհորդել, ուրեմն արէք այնպէս, ինչպէս անում են Կոլումբիայում: Վերցրէք դատարկ ճամբրուկն ու պտուտէք թաղամասով մէկ: Տանէք բլոկի շուրջը: Դա ենթադրում է, որ դուք շատ շրջագայութիւններ կունենաք:*



**«Առաջին ոտքը»**

*Շոտլանդիայում Ամանորին ընդունւած է First Footing-ը: Շոտլանդացիները կարծում են, որ առաջին մարդը, ով կէսգիշերից յետոյ կանգնի իրենց տան շեմը, ցանկալի է, որ լինի մուգ մազերով տղամարդ, որը կարող է բերել յաջողակ Նոր տարի:*



**Սպիտակ ծաղիկներ նետել ովկիանոսում**

*Բրազիլացիները սովորութիւն ունեն ամէն Նոր տարի սպիտակ ծաղիկներ նետել ծովը: Բնակիչները ծաղիկներ եւ մոմեր են նետում Ատլանտեան ովկիանոս՝ որպէս ընծայ Եէմոջային՝ Ջրի աստծուն, որը կարող է լաւ բաներ փոխանցել գալիք տարում:*



**Սոբա լապշայ**

*Ճապոնիայում Նոր տարին դիմաւորում են՝ ուտելով սոբայի կամ հնդկացորենի ալիւրից պատրաստւած լապշայ, որոնք ստացել են «տարեկան հատող արիշտայ» մականունը, եւ թէեւ այս աւանդոյթի ծագումը ճշգրիտ յայտնի չէ, ընդհանուր առմամբ, մարդիկ կարծում են, որ երկար արիշտաները երկար կեանք են խորհրդանշում:*



**Յաջողակ խոզ**

*Խոզերի եւ Նոր տարւայ միջեւ, պարզւում է՝ կապ կայ, յատկապէս Գերմանիայում: Գերմանացիներն այս սովորոյթն անւանում են Glücksschwein, որը թարգմանաբար նշանակում է «յաջողակ խոզ»: Խոզերը գերմանացիների տներում յայտնըւում են մարցիպանի տեսքով, եւ նրանց վրայ քթելը կարող է բարեկեցութիւն բերել Նոր տարում:*



**Ամանորեայ խնջոյք**

*Ամանորին ԱՄՆ-ում սնունդը, անշուշտ, կարեւոր նշանակութիւն ունի, բայց Ֆրանսիայում դա առանձնայատուկ կարեւորութիւն ունի: Ոստրէներից ու լոբստերից պատրաստւած ուտեստը, որը կոչւում է «Նոր տարւայ գիշեր», խորհրդանշում է Ամանորի հովանաւոր Սուրբի «արթնացումը»:*



**Կարմիրը՝ յաջողութեան գրաւական**

*Կարմիրը յաջողութեան եւ երջանկութեան խորհրդանիշ է համարւում Չինաստանում: Ամանորին Չինաստանում դուք կարմիր երանգներով բազմաթիւ զարդեր, նւէրների փաթեթներ եւ լապտերներ կը տեսնէք:*



**Նռով հարւածել դռներին**

*Անկախ նրանից, թէ տարւայ որ եղանակն է, Յունաստանում նուռը շատ կարեւոր է: Յունական դիցաբանութեան մէջ այս պտուղը խորհրդանշում է առատութիւն եւ կեանք: Հէնց Ամանորի կէսգիշերից յետոյ յոյները նռով հարւածում են իրենց տան դռներին. գետնին ընկած սերմերի քանակը խորհրդանշում է, թէ որքան յաջողութիւն կարող էք ակնկալել Նոր տարում:*

*Յոյների սովորութիւններից է նաեւ Ամանորին տան դռան վրայ սոխ կախելը, որը խորհրդանշում է նոր կեանք: Ծնողները Ամանորին արթնացնում են երեխաներին՝ սոխով հարւածելով նրանց գլխին:*



**Մաքրել փողոցները, մեքենաները...**

*Նոր տարւայ սկզբին Պուէրտո Ռիկօն ամենամաքուր երկիրն է, քանի որ նրանց աւանդոյթն է մաքրել իրենց տներն ու քաղաքները՝ փակ տարածքներից մինչեւ մեքենաներ եւ փողոցներ: Սա Նոր տարում թարմ էներգիայով սկսելու միջոց է:*

*Պուէրտո Ռիկոյում Ամանորեայ մէկ այլ աւանդոյթ էլ կայ. կէսգիշերին դոյլով կամ բաժակով ջուր են թափում պատուհանից՝ հին տարին մաքրելու եւ չար ոգիներին հեռացնելու համար:*



**Խնձոր կտրատել**

*Թէեւ մենք սովոր ենք կարկանդակի համար խնձոր կտրատել, սակայն Ամանորին Չեխիայում կտրատած խնձորները բացառիկ նշանակութիւն ունեն: Ամանորի գիշերը Չեխիայի բնակիչները խնձորները կիսում են մէջտեղից, եւ կտրած հատւածը՝ կորիզը, ցոյց է տալիս, թէ ինչ կարելի է սպասել գալիք տարում:*

*Օրինակ, եթէ կտրած հատւածը աստղի է նման՝ լաւ է, իսկ խաչը կարող է կանխագուշակել ապագայ հիւանդութիւնը:*



**Ոսպը՝ յաջողութեան գրաւական**

*Իտալիան յայտնի է այնպիսի ուտեստներով, ինչպիսիք են սպագետին եւ լինգուինին, բայց Ամանորի տօնակատարութիւնների ժամանակ ամէն ինչ վերաբերում է ոսպին:*

*Իտալացիները ոսպը դիտարկում են որպէս թեթեւ նախուտեստ, եւ եթէ այն ներառէք ձեր Ամանորեայ ընթրիքի մէջ, այն որոշակի յաջողութիւն կը բերի ձեր կեանքում:*



**Աղ շաղ տալ**

*Եթէ ԱՄՆ-ում եւ մի շարք երկըրներում աղը՝ թափելը կարող է անյաջողութիւն խորհրդանշել, ապա Թուրքիայում աղ շաղ տալը խրախուսւում է: Թուրքերը կէսգիշերին աղ են շաղ տալիս իրենց դռան շեմին, ինչը, նրանց պատկերացմամբ՝ կարող է յաջողութիւն բերել Նոր տարում:*



**Երեք կարտոֆիլ**

*Ամանորի գիշերը կոլումբիացիներն իրենց մահճակալների տակ դնում են մէկ հատ կեղեւով, մէկ հատ կեղեւահանւած եւ մէկ հատ էլ կիսակեղեւ կարտոֆիլ:*

*Երբ ժամացոյցն ազդարարում է կէսգիշերը, նրանք առանց նայելու մահճակալի տակից հանում են առաջին պատահած կարտոֆիլը, որը տարբեր նշանակութիւն ունի: Օրինակ՝ կեղեւով կարտոֆիլը նշանակում է ֆինանսական կորուստ, մաքրւած կարտոֆիլը լաւ տարի է խոստանում: Իսկ կիսակճեպ կարտոֆիլը տարւայ լաւի ու վատի խառնուրդ է խորհըրդանշում:*



**Աթոռներից ցատկել**

*Այս կղզու երկրում բնակիչները տան դռան վրայ սոխ են կախում, որը խորհրդանշում է նոր կեանք: Ծնողները Ամանորին արթնացնում են երեխաներին՝ սոխով հարւածելով նրանց գլխին:*

*Միգուցէ նախկինում դուք եւ ձեր ընկերները զւարճանալու համար երեկոյթների ժամանակ թռչկոտում էիք աթոռներից, բայց Դանիայում դա իսկական Ամանորեայ աւանդոյթ է:*

*Այնտեղ մարդիկ փորձում են կէսգիշերին ցատկել իրենց աթոռներից, ինչը խորհրդանշում է առաջ նետւել դէպի Նոր տարի:*

**Գունաւոր զգեստ**

*Բրազիլիայում աւանդոյթ է Նոր տարւայ տօնակատարութեանը վառ գոյնի զգեստ կրելը, որը յաջողութիւն է բերում: Կարմիրն ու դեղինը սէր եւ փող են բերում: Ոսկին՝ հարստութիւն, սպիտակը՝ խաղաղութիւն:*

*Ռիօ դէ Ժանէրոյում շատերը տօնակատարութեանը սպիտակ են հագնում:*

**168.am**

## «2023 թ.-ը...

(Շար. 5-րդ էջից)

*ես մարդիկ չեն ուզում ո՛չ երկիր ունենալ, ո՛չ պետութիւն: Շատերն ասում են՝ ես քաղաքականութեամբ չեմ զբաղւում, այն իմը չէ, բայց դու ստիպւած ես: Մեր ժողովուրդը ցոյց տւեց, որ ինքը չի զբաղւում դրանով, իր երկրի կառավարումն իր մտահոգութիւնների շրջանակներում չէ, ոչ մէկը չգնաց ընտրութիւնների: Իհարկէ հասկանալի են պատճառները, չկան այն մարդիկ, որոնք իրենց վստահութիւն կը ներշնչեն, դա էլ կայ, բայց կարելի է պայքարի այլ ձեւ ընտրել, կամ հնարաւոր է սա պայքարի ձեւ է՝ ընտրութեան չգնալը:*

***Panorama.am- 2023 թւականը բեկե՞ց մեր հասարակութեան մէջ եղած այն ապատիան, որը ձեւաւորւել է 44-օրեայ պատերազմի եւ դրան յաջորդած իրադարձութիւնների հետեւանքով:***

*Ա. Մեհրաբեան-2023 թ.-ն 44-օրեայ պատերազմից յետոյ ժողովրդի մօտ առաջացած ապատիան չբեկեց: Բեկելու համար բեկումնային իրադարձութիւններ են պէտք՝ ուզում է 3 տարի անցնի, ուզում է՝ 23 կամ 223 տարի: Եթէ բեկումնային՝ թէ՛ ներքին, թէ՛ արտաքին փոփոխութիւն չեղաւ, չի լինի:*

*Այդ նոյն արտաքին ուժերը, որ այդպէս մեծ-մեծ խօսում են՝ էս անենք, էն անենք, իրենք կոնկրետ 2020 թւականին մեր գլխին ջարդեցին այդ պատերազմը: Իրենք՝ Մինսկի խմբի համանախագահ երկրներն էին այս խնդրի տէրերը եւ իրենք էլ ասում էին, որ այս հարցը չի կարող պատերազմով լուծւի, ռազմական լուծում չունի: Է դրեցին խաբեցին, հիմա ժողովուրդն ինչ անի: Ես ոչ թէ մեղադրելով եմ խօսում ժողովրդի ապատիայի մասին, այլ այն օբիեկտիւ ապատիա է, այսինքն՝ ներքին ռեսուրսների վրայ յոյս չկայ, արտաքին ռեսուրսներն էլ տեսել ենք, որ խաբել են: Մեր գլխի տակ փափուկ բարձ դրեցին ու բերցին տեռորիստական յարձակման մատնեցին:*

*Նորից եմ կրկնում՝ բեկման համար բեկումնային իրադարձութիւն է պէտք: Նոյն Արեւմուտքը, եթէ բերի 10000 զինւոր կամ մեծ ուժեր, ապա այդ ժամանակ կարող է մարդկանց մօտ արթնանայ յոյս, որ խօսքերից բացի, ինչ որ ռէալ քայլեր է արւում: Այդ երեք տասնկը կամ ութ հատ հրանօթ տալը չեմ կարծում, որ ինչ-որ մէկի մօտ յոյսի նշոյլ է արթնացնում, թէ վերջ, երկիրն արդէն պաշտպանւած է, կամ մենք արդէն անվտանգութեան գօտիներ ունենք: Ո՛չ, բոլորն էլ գիտեն, որ ինչ-որ ցուցադրական բաներ են, որոնք, միգուցէ, այլ նպատակներ ունեն:*

*Տարին մարտահրաւէրներով լի տարի էր, ուղղակի պէտք է չկոտրըւենք, եթէ մնացել ենք, ապրում ենք այստեղ, ապա պէտք է պայքարենք, իւրաքանչիւր հայի պէտք է մանկապարտէզից դպրոց սովորեցնել, որ եթէ մենք Հայաստանում ենք, պէտք է անվերջ պայքարի մէջ լինենք: Եթէ չէ՝ պէտք է թողնենք գնանք: Եթէ ամէն մէկն իր կաշւի, իր անձի ու ընտանիքի հոգածութեան համար է ապրելու, թող գնայ լաւ բարեկեցիկ երկրում ապրի, որտեղ չի լինի պայքար: Բայց եթէ ինքը այստեղ ապրելու է ու չի պայքարելու, այն շատ սխալ է:*

*Պէտք է փոխենք գաղափարախօսութիւնը՝ գոնէ անհատների մակարդակով: Փոքր ժամանակւանից մարդկանց սովորեցնենք, որ մեր առաջին բանը մեր երկրի անվտանգութիւնն ու պայքարն է եւ՝ վերջ:*

## ՎՇՏԱԿՑՈՒԹԻՒՆ

Այսու անձնապէս եւ յանուն մեր Պատգամաւորական ժողովի, Թեմական, Կրօնական խորհուրդների եւ ողջ ժողովականութեան խորազգաց ցաւակցութիւն ենք յայտնում՝ Սարգըսեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՅՈՎՍԷՓ (ՍՈՒԼԹԱՆ) ՍԱՐԳՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

Աղօթում եւ մաղթում ենք, որ Ամենակալ Աստուած Իր լոյսերի մէջ հանգչեցնի նորոգ հանգուցեալի հոգին եւ իր հարազատներին Ս. Հոգու մխիթարութիւն պարգեւի:

**ՍԵՊՈՒՀ ԱՐՔ. ՍԱՐԳՍԵԱՆ**
**ԱՌԱՋՆՈՐԴ ԹԵՀՐԱՆԻ ՀԱՅՈՑ ԹԵՄԻ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւնն ենք յայտնում՝ տկն. Արմինէ Սարգսեանին, Սարգսեան ընտանիքին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՅՈՎՍԷՓ (ՍՈՒԼԹԱՆ) ՍԱՐԳՍԵԱՆԻ**

ցաւալի մահուան առթիւ:

**Թ. Հ. Թ. ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆԻ ՊԱՇՏՕՆԷՈՒԹԻՒՆ**

## ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀՐԱՒԷՐ

«Ա. Աւետիսեան» ազգային բուժարանը կարիք ունի

**ԸՆԴՈՒՆԱՐԱՆԻ ԲԱԺՆԻ ԱՇԽԱՏՈՂՈՒՀԻ**

Յաւելեալ տեղեկութիւնների համար կապուել 77256457-60 (ներքին 126) հեռախօսահամարներով:

**«Ա. ԱՒԵՏԻՍԵԱՆ» ԱԶԳԱՅԻՆ ԲՈՒԺԱՐԱՆԻ ԽՆԱՄԱԿԱԼ ՄԱՐՄԻՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Ալիս Դաւթեանին (Իպթուջեան), Թուխծամ եւ Դաւիթ Դաւթեաններին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՎԱՐԴԱՆ ԴԱՒԹԵԱՆԻ**

ցաւալի մահուան կապակցութեամբ:

**ԱՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ**

## ՑԱՒԱԿՑԱԿԱՆ

Այսու մեր խորազգաց ցաւակցութիւններն ենք յայտնում՝ Երէցկին Փառքուհի, Անդրէ, Արին եւ Արսինէ Շմաւոնեաններին եւ միւս բոլոր հարազատներին, իրենց կրած ծանր ու անփոխարինելի կորստի՝

**ՏԷՐ ՎԱԶԳԷՆ ՔՀՆՅ. ՇՄԱՒՈՆԵԱՆԻ**

ցաւալի մահուան կապակցութեամբ:

**ԱՐԱՔԻ ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԱ-ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԻՒՆ**


ԱԼԻՔ Օրաթերթ
Արտօնատէր՝ ԱԼԲԵՐՏ ԱՃԵՄԵԱՆ
Հեռախօս՝ (0098-21) 88768567 - 88761154
Հեռապատճէն՝ 88760994
Փոստարկղ՝ 11365-953 Թեհրան - Իրան

آلیک
روزنامه سیاسی، اجتماعی، ادبی و هنری
صاحب امتیاز: موسسه جمعیت ادبی آلیک
مدیر مسئول: آلبرت عجمیان
خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶
کدپستی: ۱۵۵۸۸۳۳۹۱۱
تهران صندوق پستی: ۹۵۳-۱۱۳۶۵ فاکس: ۸۸۷۶۰۹۹۴
تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ – ۸۸۷۶۸۵۶۷ چاپخانه آلیک

ALIK ARMENIAN DAILY
Add.: 16, Shahid Mohebi Ave., North Sohravardi Ave.,
Tehran 1558833911, Iran P. O. Box: 11365-953
Tel.: (0098-21) 88768567 -88761154
Fax: 88760994
E-mail : info@alikonline.ir
www.alikonline.ir



ԱՄԷՆ ՏԵՍԱԿԻ
ԼՈՒԱՑՔԻ ԵՒ ԱՄԱՆ ԼՈՒԱՑՈՂ
ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՆՈՐՈԳՈՒՄ՝
ԲՆԱԿԱՐԱՆՈՒՄ
Հեռ. 26320084 եւ 09124187835,
Վահիկ Իսկանդարեան


## ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

**«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ**













## ԼՈՅՍ ՏԵՍԱՒ ԵՒ ՎԱՃԱՌՒՈՒՄ Է

Այսու յայտնում ենք, որ

**2024 թուականի «ԿԱՆԹԵՂ» օրացոյցը**

ստանալու համար կարող էք դիմել հետեւեալ հասցէներին:

| | | |
|---|---|---|
| ۱ | کلیسای سرکیس مقدس | خیابان کریم خان زند، نبش خیابان استاد نجات الهی جنوبی |
| ۲ | فروشگاه آرارات | مجیدیه، ۱۶ متری دوم، مقابل کوچه ۱۱، پلاک ۱۲۱ تلفن: ۲۲۵۲۳۰۱۸ |
| ۳ | فروشگاه رافی | مجیدیه، ۱۶ متری اول، بین کوچه ۶ و ۷، پلاک ۱۳۳ تلفن: ۸۸۴۰۵۲۸۰ |
| ۴ | فروشگاه استاندارد | خیابان سنائی، بین کوچه ۲۲ و ۲۴، پلاک۱۴۹/۳ تلفن: ۸۸۳۰۶۴۶۰ |
| ۵ | کلیسای حضرت مریم | خیابان جمهوری، خیابان میرزا کوچک خان، کلیسای حضرت مریم تلفن: ۶۶۷۰۶۱۵۱ |
| ۶ | ملینا کارت | خیابان میرزای شیرازی، نبش خیابان ۱۵ تلفن: ۸۸۸۲۹۴۲۱ |
| ۷ | سوپر زیتون | نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، نرسیده به داریوش ملایری، پلاک ۳۵ تلفن: ۷۷۸۴۸۵۱۵ |
| ۸ | فروشگاه توتو | نارمک، ۴۶ متری غربی، خیابان غیاثی پور جنوبی، نبش خیابان ۸۶ ، پلاک ۵۵ تلفن: ۷۷۹۹۰۶۳۳ |
| ۹ | فروشگاه های کارت | مجیدیه جنوبی، ۱۶ متری اول، روبروی کوچه پنجم، پلاک۸۴ تلفن: ۸۸۴۰۹۶۳۳ |
| ۱۰ | سوپر شهر فرنگ | خیابان قائم مقام فراهانی، جنب داروخانه، پلاک ۵۳ تلفن: ۸۸۳۰۷۸۵۱ |
| ۱۱ | فروشگاه آرمن | نارمک، ۴۶ متری غربی ، شیرمرد جنوبی (سهیلیان)، پایین تر از خیابان ۸۴، پلاک ۳۶ تلفن: ۷۷۲۵۱۵۶۶ |
| ۱۲ | انجمن فرهنگی ورزشی نائیری | مجیدیه جنوبی، ۱۶ متری دوم، کوچه زرین قبائی، پلاک ۱۴۶ تلفن: ۲۲۵۱۰۱۲۸ |
| ۱۳ | روزنامه آلیک | خیابان سهروردی شمالی، خیابان شهید محبی، پلاک ۱۶ تلفن: ۸۸۷۶۱۱۵۴ |
| ۱۴ | قهوه آرام | خیابان قائم مقام فراهانی، پایین تر از میدان شعاع، پلاک ۶۴ تلفن:۸۸۳۰۸۷۳۰ |



## «Մինչեւ....

(Շար. 1-ին էջից)

զոհւելու կապակցութեամբ յաւելել է, որ առաջին պայթիւնից անմիջապէս յետոյ, ինքն այցելել է դէպքի վայր, որտեղ անձամբ երկրորդ պայթիւնի ականատեսն է եղել:

Անդրադառնալով այն փաստին, որ երկու մահապարտներից մէկն ունեցել է Տաջիկստանի քաղաքացիութիւն, Բախշին յաւելել է. «Արժէ յիշեցնել, որ ահաբեկչական գործողութեան նախատակների յուղարկաւորութեան օրը եւս յայտնաբերւել եւ ձերբակալւել են եւս երկու մահապարտ ահաբեկիչներ: Այս գործով մինչ այժմ նրանց աջակցող խմբից կալանաւորւել է 32 անձ, որոնք հարցաքննւում են կամ գտնւում են հարցաքննութեան նախնական փուլում»:

Յայտարարելով, որ ահաբեկիչներին յայտնաբերելու գործողութիւնը իրականացւել է 3 փուլում նա նշել է, որ աշխատանքի հէնց սկզբում նահանգային Արդարադատութեան ղեկավարի հրամանագրով առաջին փուլում ուսումնասիրւել են Անվտանգութեան խորհրդի քննարկումները: «Երկրորդ փուլում իրականացւել է հետաքննութիւն ահաբեկչական գործողութեան պլանաւորման վերաբերեալ: Երրորդ՝ գործողութեան իրականացման փուլն է ուսումնասիրւել»,- յաւելել է գլխաւոր դատախազը:

Նշելով, որ ժողովուրդը բոլոր երեք ուղղութիւնների վերաբերեալ էլ հարցեր ունի, որոնց պէտք է տրւի լիարժէք պատասխան, նա յիշեցրել է. «Ղասեմ Սոլէյմանիի նահատակութեան տարելիցի շտաբն իր աշխատանքներն սկսել էր երեք տարի առաջ, որի շրջանակներում կեանքի էր կոչւել անվտանգային հարցերով կոմիտէ: Նախորդ տարիների միջոցառման բացթողումները լուծելու նպատակով եւ այս տարւայ միջոցառումների իրականացման համար տեղի է ունեցել չորս կարեւոր հանդիպումներ, որտեղ զեկուցաբերները յայտնել էին յայտնաբերւած եւ չէզոքացւած 16 ռումբերի մասին»:

Նա յաւելել է. «Իսրայէլը, դիմադրութեան ճակատից կրած պարտութեամբ, անցել էր վարձկանների հաւաքագրմանը, որպէսզի այս օրերի ընթացքում իրականացնի ահաբեկչական գործողութիւններ: Իսկ ԴԱԷՇ-ը եւս այն խմբաւորումներից էր, որին մեծ հարւած էր հասցւել նահատակ Սոլէյմանիի գլխաւորութեամբ»:

Դատախազը ընդգծւած նշել է, որ պայթիւնների նախորդ գիշերը միջոցառման ողջ տարածքը վերահսկւել եւ հետաքննւել է էլեկտրական սարքերով ու պայթուցիկ յայտնաբերող շներով, սակայն ոչինչ չի յայտնաբերւել:

Անդրադառնալով այն փաստին, որ վերջին երկու ամիսների ընթացքում Քերմանում Ազգային հետախուզութեան նախարարութեան եւ Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի հետախուզութեան կողմից բացայայտւել եւ ձերբակալւել են մեծ թւով մահապարտներ, դատախազը յաւելել է. «Վերջին երկու ամսում Քերման նահանգում ԴԱԷՇ-ի 23 անդամ է ձերբակալւել»:

Բախշին տեղեկացրել է, որ ապացոյցներից մէկը, որը ցոյց է տալիս, որ մահապարտ-ահաբեկչին չի յաջողւել մօտենալ ամբոխին, մեծ թւով զինւորականների եւ իրաւապահների նահատակութիւնն ու վիրաւորման դէպքերն են: «Իսկ Peugeot մակնիշի աւտոմեքենայի կապակցութեամբ եւս պէտք է յայտնել, որ մեքենան ունեցել է երթեւեկութեան արտօնագիր եւ եղել է երթն սպասարկող մեքենաներից: Անցկացւած հետաքննութիւնների արդիւնքում պարզ դարձաւ, որ մեքենան ոչ միայն պայթիւնի աղբիւրը չէ, այլեւ այն պատնէշի օրինակով հաւաքել է ռումբի բեկորների զգալի մասը»:

«Մենք ոչ մի կերպ չենք եկել այն եզրակացութեան, որ պայթուցիկ փաթեթը տեղադրւած է եղել այդ կէտում, եւ երկու պայթիւններն էլ մահապարտ-ահաբեկչի կողմից է եղել»,-հաստատել է գլխաւոր դատախազը:

Անվտանգութեան եւ ԶՈՒ-ի ուժերի կողմից որեւէ բացթողում չի արձանագրւել:

Նշելով, որ անվտանգութեան կոմիտէն մտածել էր բոլոր անհրաժեշտ միջոցների մասին, նա յաւելել է, որ Անվտանգութեան խորհրդի նիստում եւս ուսումնասիրւել են գործի հանգամանքները, որտեղ բոլորը համակարծիք էին, որ այս միջադէպում չի նկատւել անվտանգային ուժերի կողմից անփութութեան որեւէ դրւագ»:


# ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

**Ս. Ծննդեան տօնի առթիւ**
**Թեհրանի նահանգապետ դոկտ. Էֆթեխարիի եւ**
**Իսլ. խորհրդարանում Թեհրանի եւ հիւսիսային**
**իրանահայութեան պատգամաւոր Արա Շահվերդեանի**
**նախաձեռնութեամբ ու համագործակցութեամբ**
**Թեհրանի 8-րդ քաղաքամասի քաղաքապետարանի եւ**
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցու Եկեղեցական խորհրդի**
**կազմակերպւելու է**

**«Սպասարկութեան սեղան» (میز خدمت)**

**վերահասու լինելու թեհրանահայութեան խնդիրներին՝**
**կապւած ջրի ու կոյուղու (آب و فاضلاب),**
**էլեկտրաէներգիայի (برق), գազի (گاز),**
**Իմամ Խոմէյնիի անւան նպաստամատոյց կոմիտէի**
**(کمیته امداد امام خمینی)**
**ինքնութեան թղթերի գրանցման վարչութեան (اداره ثبت احوال)**
**եւ 8-րդ շրջանի քաղաքապետարանին (شهرداری منطقه ۸)**
**կապող խնդիրների ու բարդութիւնների կապակցութեամբ:**

Թւական՝ **երեքշաբթի, յունւարի 9-ին (دی ۱۹), 2024 թ.,**
**ժամը 10:00-ից 12:00-ը**

Վայր՝ **Մաջիդիէ, Ջամշիդ Ռոյեան փողոց,**
**Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցում**



Երկու տարբեր թռիչքներ դէպի՝ Հայաստան

**ԹԵՀՐԱՆ - ԵՐԵՒԱՆ - ԹԵՀՐԱՆ**

هواپیمایی ایران ایرتور IRAN AIRTOUR AIRLINES
هواپیمایی قشم QeshmAir

برای تهیه بلیط می توانید با
شرکت حمل و نقل بین المللی و مسافرتی ستی
Sati
۰۲۱-۸۸۵۴۱۲۴۲-۵ و ۸۸۵۴۱۲۹۸-۹ agency@sati-co.com

و در شهر اصفهان با آژانس آرمان گشت «نارِبه ژاردن» ۰۹۱۳۳۰۰۸۰۲۹
و شباهنگ سیر «رافیک خداوردیان» ۰۹۱۳۳۰۵۳۸۳۵ تماس حاصل نمایید.

«ԲԱԶԷ» ՃԱՄԲՈՐԴԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆ
آژانس مسافرتی «بازه»
BAZE TOUR & TRAVEL AGENCY
Հասցէ՝ Կոմիտաս 20, բն. 22, Երեւան, Հայաստան
Հեռախօս՝ +374 965 75 305 եւ + 374 102 22 824
نشانی: خیابان کومیتاس، شماره ۲۲، ایروان – ارمنستان تلفن: ۳۷۴+ ۱۰۲ ۲۲ ۸۲۴ , ۳۷۴+ ۹۶۵ ۷۵ ۳۰۵
Address: Komitas St., Bld.20, Apt. 22 E-mail: info@bazetravel.am


## ԻՅՊԿ-ի ռազմածովային ուժերին միացան մէկ ռազմանաւ եւ ռազմավարական նշանակութեան հրթիռ արձակող լողացող կայանքներ

Երէկ՝ յունւարի 6-ին Իրանի Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի ռազմածովային ուժերին է միացել մէկ ռազմանաւ եւ հարիւր լողացող կայանքներ:

Դրանց թւում են նահատակ Աբու Մահդի Ալ-Մոհանդեսի անւան մարտական պարեկային ռազմանաւը, հրթիռներ արձակող չորս «Զոլֆաղար մոդել 16» նաւեր եւ հինգ «Աշուրա-Քոսար» պաշտպանական լողացող կայանքները:

Դրանից բացի, այլ սարքաւորումների թւում են հինգ «Աշուրա» տորպեդահարող լողացող կայանքներ, ինը «Մերսադ» մարտական հետախուզական լողացող սարքեր, հրթիռներ արձակող մէկ կատարելագործւած «Թարեղ» լողացող սարք եւ երկու «Աշուրա» հրամանատարական նաւակներ:

Հրթիռային կայանքները ներառում են երկու 40-փողանի տակտիկական հրթիռային կայանքներ, քսան 8-փողանի հրթիռային կայանքներ եւ 12 տակտիկական ականանետային կայանքներ:

Parstoday.ir-ի համաձայն՝ Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի ռազմածովային ուժերի հրամանատար գեներալ Ալիռեզա Թանգսիրին այս արարողութեան ժամանակ ասաց. «ԻՅՊԿ-ի ծովային ուժերին այս սարքաւորումների աւելացումը նախորդ տասնմէկ համալրումների շարունակութիւնն է՝ հզօրութեան բարձրացման գործընթացի շարունակման ուղղութեամբ»:

Իսլամական յեղափոխութեան Պահապանների կորպուսի գլխաւոր հրամանատար, գեներալ-մայոր Հոսէյն Սալամին նոյնպէս այս արարողութեան ժամանակ ասաց, որ Իրանի Իսլամական Հանրապետութիւնը, գիտակցելով ծովի նշանակութիւնը՝ որպէս մարտերում վճռորոշ, ճակատագրական ու առանցքային ասպարէզ, ձեռնամուխ է եղել արտասովոր ծովային ուժի ձեւաւորմանը, զարգացմանը եւ համալրմանը:

Նահատակ Աբու Մահդի Ալ-Մոհանդեսի անւան մարտական պարեկային ռազմանաւը, ելնելով ԻՅՊԿ-ի ռազմածովային ուժերի գործառնական կարիքներից, նախագծւել եւ արտադրւել է երիտասարդ իրանցի փորձագէտների կողմից՝ գիտելիքահենք ընկերութիւնների հետ համագործակցութեամբ:


SET Coffee
فروشگاه: هفت تیر، قائم مقام فراهانی، خیابان فجر، پلاک ۱۰
کارخانه: شهرک صنعتی خوارزمی، بلوار ماگنولیا، پلاک ۸۱۱۷
0936-6726563
021-88305827
www.set-coffee.com
قهوه سِت

املاک هنرمندان
● بزرگترین آژانس مسکن
مرکز شهر تهران (منطقه ۶)
● خانه های قدیمی تخصص ماست
آدرس: میدان هفت تیر، کریمخان،
خردمند شمالی، نبش دی، ساختمان ۱۱۹، پلاک ۴
تلفن: ۸۸۸۴۵۵۷۷– ۸۸۸۴۵۵۶۶
واتس آپ: ۰۹۱۲۹۵۸۵۱۴۰
مدیر داخلی (هماهنگی): ۰۹۳۰۹۲۱۳۷۲۴
مدیریت: ۰۹۱۹۴۳۱۸۳۱۹ امیر قربانی

ՔԱՐԻՄԻ
Գորգերի, սառնարանների եւ գազ սպառող զովամուղի, կահոյքի եւ անտիկ իրերի լաւագոյն գնորդ
خریدار فرش، یخچال فریزر، کولر گازی،
مبلمان، خرده ریز و لوازم آنتیک
Հեռ.՝ 88594063 եւ 0912 1193212

«Արարատ»
Ամէն տեսակ տնային իրերի գնորդ
سماور ذغالی، نقره جات، ظروف مسی،
چراغ لاله و لوستر،
رادیو لامپی ، رادیوگرام مبله، صفحه گرام ،
لوازم چوبی آنتیک و خرده
Հեռ.՝ 88523388


## «Համշահրի online»-ը իր կայքում տեղադրել է Թեհրանի հայոց թեմի առաջնորդի հետ հարցազրոյցի տեսաֆիլմը

همشهری ONLINE

«ԱԼԻՔ» - Թեհրանում լոյս տեսնող «Համշահրի» օրաթերթը Ամանորի եւ Ս. Ծննդեան տօների առիթով՝ համապարփակ հարցազրոյց է ունեցել Թեհրանի հայոց թեմի առաջնորդ Տ. Սեպուհ արք. Սարգսեանի հետ, հարցազրոյցը լոյս է տեսել յունւարի 6-ի համարում:

Յատկանշական է նաեւ, որ «Համշահրի online»-ը եւս իր կայքում տեղադրել է նոյն հարցազրոյցի տեսաֆիլմը:


ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Օժանդակելու համար օրաթերթիս՝ կարող էք ձեր հին թղթերը յանձնել

**«Ալիք» օրաթերթին՝ առաւօտեան ժամը 8-ից մինչեւ ժամը 20:00-ը**

(Մեծ քանակութեան պարագայում՝ նախապէս համադրելու խնդրանօք)՝ հետեւեալ հասցէով.

Հիւսիսային Սոհրեւարդի պող., Մոհեբի փողոց, համար 16
Հեռ.՝ 88761154

«ԱԼԻՔ» ՕՐԱԹԵՐԹ